

ՆԵՐՍԷՍ ՄԵԾԻ ՅԱԶՈՐԿՆԵՐ

Տ. ՇԱՀԱԿ ՄԱՆԱԶԿԵՐՏԱՑԻ

1. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՒՆԸ

Մեծին Ներսէսի մահուան և թաղման վրայ ատեն չանցաւ, թաղաւոր և եպիսկոպոսներ համաձայնութեամբ հալրապետական աթոռին վրայ հանեցին Շահակը: Սա ոչ երկար ատեն պաշտօնավարեց և ոչ լիշատակաց արժանի գործ մը կատարեց, բայց շատ խնդիրներ կան իւր վրայ մտադրութիւն հրաւիրող և նշանաւոր դիպուածներ ալ չեն պակսեր իւր ժամանակին մէջ:

Առաջին խնդիր բուն իսկ անունն է՝ Խորենացի (Խոր. 94) և անոր հետևողութեամբ պատմագրաց և ցուցակագրաց ստուար մեծամասնութիւնը կը գրեն Շահակ, որ է նոյն ինքն իսահակ կամ Սահակ անունը ասորական հնչմամբ, որուն կը հետևէր Տարոն գաւառն ալ հարաւային գաւառաց հետ: Կան և պարզապէս Սահակ գրողներ (Սմբ. 273), Բուզանդ Յուսիկ անուն կուտայ (Բուզ. 232), և ալս պատճառով ոմանք երկու անուններն ալ պահելով Յուսիկ մը և Շահակ մը միանգամայն անցուցին իրենց ցուցակին մէջ:

Մեր կարծեօք Խորենացու Շահակը և Բուզանդայ Յուսիկը տարբեր անձեր չեն, ալ մի և նոյն անուան դրչական տարբերութիւնք են, կամ թէ երկու անունով անձ մըն է, ինչպէս Փառէն — Ներսէ՛ հալրապետին համար ըսինք: Երկու պատմագիրք ալ Ներսէսի և Զաւէնի մէջ միայն մէկ կաթողիկոս կը ծանչնան, և օրէն չէ շատ ցնեւ Երկուքին լիշտ անձն ալ նոյն Մանազկերտ գաւառէն է և նոյն Աղբհանոսի ցեղէն. երկուքին պաշտօնական նկարագիրը նոյն, և կաթողիկոսական ընտրութեան և ձեռնադրութեան կերպերը նոյն, կաթողիկոսութեան տևողութիւնն ալ նոյն միջոցով փակուած: Մի և նոյն ժամանակի մէջ երկու ըստ ամենաչնի հաւանման անձեր գտնել, մի և նոյն անձը գտնել ըսել է:

Գրչութեան տարբերութեան լուծումը կուտայ մեզ Ներսէսի և Բարսղի ժամանակ պատրաստուած արևելեան եպիսկոպոսաց ուղերձը, որուն վրայ խօսուեցաւ Ներսէսի կաթողիկոսութեան վերջերը: Յունարէնին մէջ Iosacis=իսուակ գրուած անունը Լատիններէնի մէջ Isaacis=իսահակ գրուած է, որոնց առաջինը առաւղարձական փոփոխումներով կը լինի Յուսակ և Յուսիկ, իսկ երկրորդը կը լինի Սահակ և Շահակ, Այդ դիտողութիւնը իրաւունք կուտայ մեզ հետեցնելու թէ լուսարէն Բուզանդական պատմութենէ քաղուած Բուզանդարանը Շահակի անունը Յուսիկի փոխեց, և թէ երկու անուններ երկու անձեր չեն և երկու կաթողիկոս ընդունելու չեն նպատար:

Տարբեր անուն մըն ալ կը գտնեմք Ալրիվանեցւոյն ցուցակին մէջ, ուր Շահակի տեղ Չոնակ գրուած է (Ալր. 16), որ Ներսէսի ժամանակ հակաթոռ կամ ետեղակալ գրուած անձին անունն է: Արդէն Ներսէսի վրայ խօսած ատեննիս ալ ըսինք թէ Չոնակ ըսուածը Շահակէ տարբեր անձ մը չկրնար լինել, հետևաբար Ալրիվանեցւոյն ցուցակն ալ իւր տարբերութեան մէջ նկատողութեան արժանի պարագայ 'ը կը պարունակէ և կը հաստատէ թէ Շահակ—Չոնակ—Յուսիկ անձը, մի և նոյն հալրապետն է, զոր մեք կը շարունակեմք առելի սովորական անունով Շահակ կոչել:

Շահակի համար գրուած ծանօթութիւններն են, թէ Մանազկերտէ էր, թէ Մանազկերտի եպիսկոպոս էր, և թէ Աղբիանոս եպիսկոպոսի ցեղէն էր, որ Մանազկերտացեաց ցեղ ալ կը կոչուի (Խոր. 94. Բուզ. 45. 23. Նշն. 27, Փարպ. 376): Աղբիանոս եպիսկոպոս ծանօթ է Ազաթանդեղոսէ իբրև Լուսաւորչի նախընծայ և նախաթոռ 12 եպիսկոպոսներուն առաջինը, որ ապա Եկողմանց Եփրատական գետոյն եպիսկոպոս եղաւ (Ազաթ. 626), ալսինքն է Հարք և Սանազկերտ զաւառներուն շոր կալ ի կողմանս գետոյն Եփրատա (Բուզ. 10), որ ուրիշ տեղ Բզնունեաց եպիսկոպոս ալ կը կոչուի (Արծր. 6): Աղբիանոս եպիսկոպոս միանգամայն և ա վերա կացու արքունական դրան բանակին» (Ազաթ. 627, և ան թէ ինչու Լուսաւորչաց ցեղէն աթոռակալին պակաս կամ բացակալ լինելուն, Աղբիանոսի զաւակէն կառնուի չաջորդը կամ տեղակալը: Իսկ Մանազկերտ Աղբիանոսի կալուած տրուեցաւ Խոսրովը Մանաւաղեանց կոտորածէն ետքը (Բուզ. 0):

Շահակի և Աղբիանոսի ազգակցական շարաբերութիւնը

տեղ մը եղբայր ըսուած է (Սամ. 273), սակայն առաջին պատմողներ Վաղորդէ և ի ժառանգութենէն (Սոր. 94), կամ շի դաւակէն (Բուզ. 232), միայն կըսեն և ոչ աւելի. և 303-ին տոնները նախաթու եպիսկոպոս լինելու տարիքն ունեցող Աղբիանոսը, 373-ին կաթողիկոս ընտրուող Շահակին եղբայր չկրնար ըլլալ, և ոչ իսկ որդի, զի 303-է շատ կանուխ ծնած պէտք է ենթադրել, մանաւանդ որ եթէ եղբայր կամ որդի լինէր, ինչ ըլլալը ժամանակին լալտնի կը գրուէր: Ուստի գոնէ Աղբիանոսի թոռ կամ կրտսերեղբոր որդի պէտք է ըսել. և 352-ին տեղապահութիւն ըրած լինելն ալ նկատի առնելով, պէտք է 373-ին 70 տարեկանէ վեր ենթադրել Շահակ կաթողիկոսը:

2. ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Շահակ ըստ միաձայն վկայութեան պատմչաց ձեռնադրութեան համար կեսարիա չգնաց (Սոր. 94. Բուզ. 232, Նշի. 27), և պատճառն ալ այն է որ արդէն եպիսկոպոս էր. (Բուզ. 232), և նորէն ձեռնադրութիւն չէր ըլլար: Յուսիկի, Փառէնի և Ներսէսի կեսարիա երթալնին պատմած տոններն եպիսկոպոս չլինելնին ալ միանգամայն լինեցուցինք. բայց Շահակի չերթալը ազադալին մէջ հաստատուն սովորութիւն եղաւ, և անկէ առիթ առնելով դէմդէմի կեղծ պատմութիւններ չինուեցան:

Բուզանդ կը գրէ թէ երբ կեսարիոյ արքեպիսկոպոսը Շահակի կաթողիկոսանալը լսեց, բարկացաւ, և եպիսկոպոսաց նահանգական ժողով գումարեց, Հալոց կաթողիկոսութիւնը ջնջեց, և լոկ հալ եպիսկոպոսներու վրայ նախաթուութեան իրաւունքը թողուց, պարզապէս արքունեաց մէջ հաց օրհնելու պաշտօնով, որ լալտնի չէ թէ ճաշ օրհնել թէ ոչ պատարագ մատուցանել պիտի իմացուի, և միանգամայն հրաման հանեց որ այնուհետև բոլոր Հայաստանի եպիսկոպոսներ կեսարիա երթան և այնտեղ ձեռնադրուին:

Այս ամեն տարօրինակ կարգադրութիւնք պէտք է 373ին եղած լինին, մինչ 370էն 379 կեսարիոյ արքեպիսկոպոսը Ս. Բարսեղն է. որուն ամեն գործերը ամենայն մանրամասնութեամբ իւր գրքերէն և նամակներէն և իւր ընկերակցաց և աշակերտաց գրուածներէն կը քաղուին. իսկ Բաւզանդի պատ-

մածներուն հետքն անդամ չտեսնուիր: Երբ Թիանիու և Նիկոպոլոս եպիսկոպոսներուն հետ վարած խնդիրները ամեն պարագաներով գրուած են, դարմանալի պէտք է լինէր որ Հայոց կաթողիկոսին հետ ունեցած աւելի մեծ և աւելի կարևոր խնդիրը բացարձակապէս մտադրութենէ վրիպէր:

Աւելին ալ կայ: Բարսեղ Հայոց և հայ եպիսկոպոսաց խնդիրներ ալ կը լինէ և Հալաստան ալցելիւն ալ կը սլատմէ, սակայն Բարսեղի ըրածը և զրածը Նիկոպոլիս և Սադաղա և Կողոնիա և Մելիտինէ և Կոմանա քաղաքներու շրջանակներու մէջ կամիլոսիւն, որոնք Փոքր Հայոց քաղաքներ են և Պոնտոսի եքսարքութեան Առաջին Հալք և Նրկորոզ Հալք կոչուած նահանգներ կը կաղմեն, և Մեծ Հալքէ դուրս կը մնան, որ է ըսուն Հայոց կաթողիկոսին վիճակը կամ իրաւասութեան սահմանը: Պէտք է նս աւելացնել որ Բուզանդի ցուցած պարագաներէն և ոչ մէկը երբեք ճշմարտուած չէ. ոչ կաթողիկոսը լոկ հացերէց մը դարձած է, ոչ Հայոց մէջ եպիսկոպոսական ձեռնադրութիւնը դադրած է, ոչ հայ եպիսկոպոսացուներ Կեսարիայէ ձեռնադրութիւն առած են, ալ միայն Շահակէ սկսելով կաթողիկոսներն ալ Կեսարիայէ ձեռնադրուած չեն. և 353-էն ետքը Կեսարիոյ հետ պատահաբար սկսած ձեռնադրութեան կապն ալ դադրած է:

Այդ ձեռնադրութեան պատահական կապն ալ մենք կընդունինք միայն ի պատիւ մեր ազգային գիրքերուն. ապա թէ ոչ եթէ արտաքին պատմագրաց և մատենագրաց զիմեմք և եթէ ինչպէս արժամ ոմանք կուզեն՝ միայն արտաքին պատմիչներուն ըսածը իբր գերագոյն հեղինակութիւն և պատմական ստուգութիւն ընդունեմք, իրաւունք կունենամք նոյն իսկ Գրիգորի և Ներսէսի Կեսարիա ձեռնադրուած լինելն ալ ջնջել. քանի որ արտաքինք ասանկ բան մը չեն պատմեր: Հետևաբար եթէ ազգային պատմագիրներով պիտի խօսիմք, պէտք է ընդունիմք թէ 303է 373 տարիներու միջոցին ալ ոչ երբէք Կեսարիոյ արքեպիսկոպոսներ Հայոց եկեղեցու գործերուն միջամտեցին, ոչ երբէք Հալեր խնդրոյ համար Կեսարիա զիմեցին, և ոչ երբէք Հայոց կաթողիկոսութիւնը ինքզինքը Պոնտոսի եքսարքութեան ենթարկեալ ճանչցաւ. և ոչ ալ Կեսարիոյ արքեպիսկոպոսներ Մեծ Հալքը իրենց իրաւասութեան մէկ նահանգը կարծեցին:

Յետին դարերու պատմութիւնք Մօրիկներու և Հերակլներու ժամանակ այնպէս կը ցուցնեն, որ երբ կայսերք Հալ-

աստանէ գաւառներ առին և լուծական նոր կուսակալութիւններ կազմեցին, եկեղեցական կարգադրութիւններ ալ ըրին և Հայաստանի մէջ լուծական մտքապոլտութիւններ և եպիսկոպոսութիւններ ստեղծեցին. բայց այս ոչ չորրորդ դարու վիճակը կը փոփոխէ, և ոչ Հայոց հայրապետութիւնը կը լախտէ: Ստորգ է ևս որ քաղաքական տիրապետութեան հետ եկեղեցական տիրապետութեան ալ փորձեր եղան ժամանակ ժամանակ, սակայն աչս ալ հիմնական կացութիւն մը չեղծաներ, ինչպէս լուծական պատրիարքութեանց իրաւասութիւններ չկորսուեցան, երբ Խաչակրաց ժամանակ իրենց աթոռներուն վրայ լատին աթոռակալներ դրուեցան:

Բուզանդի կաղմած պատմութիւնը դարմանելու համար, հակառակ պատմութիւն մը կը գտնեմք Ներսէսի վերջէն գորուած վարքին մէջ, զոր առաջին պատմութիւնք չեն լիչեր: Նոր պատմութիւն նախ կըսէ թէ Կեսարիա երբեմն Հայոց քաղաք էր և թէ Կեսարիոյ առաջին եպիսկոպոսն Քէոփիլոս Թաղէոսէ ձեռնադրուած էր, և ապա կը լաւելու թէ Ներսէսի բարեկարգութեանց ժամանակ ժողովով հաստատուեցաւ որ ալ ևս Կեսարիայէ ձեռնադրութիւն չառնուի, վասն զի Հայոց աթոռն ալ առաքելական է Թաղէոսով և Բարդուղիմէոսով, վասն զի նոյն միջոցին Նրուսաղէմ ալ և Կիպրոս ալ Կոստանդնուպոլսոյ ժողովոյն որոշմամբ պատրիարքութեան փոխուեցան և նոյն ժողովը Հայոց պատրիարքութիւնն ալ ընդունեցաւ (Նշխ. 9—10, Յովհ. 62):

Արդ այսպիսի եղելութիւն մը իբր պատմական չեմք կարող ընդունիլ. զի Ներսէսի սկզբնական պատմադիրներէն և ոչ մին ալսպիսի բան մը չեն լիչեր. զի արտաքին պատմիչներու և ժողովներու մէջ ալ ալսպիսի բան չկայ, և վերջապէս վասն զի ալսպիսի պատմութեան առիթ ալ չկայ: Հայոց աթոռը իւր հիմնարկութեամբ առաքելական է, իրօք ալ ազատ մնացած է որեւէ ուրիշ աթոռոյ մը գերիշխանութիւնէ. որով մեծ աթոռներէն և ոչ մէկը կրցած է իշխանութիւն վարել անոր վրայ: Պարզ ձեռնադրութեան խնդիր մը կայ, արտաքնոց բոլորովին անծանօթ, իսկ ներքնոց համար ծանօթ միայն երկու պատահական պարագայից մէջ Գրիգորի և Ներսէսի վրայ, և ըստ Բուզանդայ միայն նաև Յուսիկի և Փառէնի վրայ:

Անտեղի է նաև ոմանց ըսելը թէ ամինչև ի ժողովն Քաղկեդոնիս (Վարք. 31) Հայք Կեսարիայէ ձեռնադրութիւն ա-

ուին, Քաղկեդոնի ժողովը տեղի ունեցաւ 451-ին, և վերջին կեսարիա դացոյը կըլլաւ Ներսէս 353-ին Քաղկեդոնի ժողովէն դար մը առաջ. իսկ այս դարուն մէջ որ Քաղկեդոնէն առաջ է, Շահակ և Չաւէն և Ասպուրակէս և նոյն ինքն Ս. Սահակ Պարթեւ կեսարիա դացած չեն լստնապէս:

Անտեղի է և ալն մեկնութիւնը թէ երբ Հայոց աթոռը պատրիարքութիւն հռչակուեցաւ Ներսէսի ձեռք, եկեղեցւոյ իննեակ դասակարգութիւնը լրացնելու համար վրաց և Աղուանից աթոռներն ալ արքեպիսկոպոսութիւն եղան. իսկ Սեբաստիա և Մելիտինէ և Նիքիերա և Ծոփք և Մուսուլ մտարապոլութիւն հռչակուեցան (Նշխ. 11): Մեք գիտեմք թէ Վիրք և Աղուանք Լուսաւորչի ժամանակէն մեծ աթոռ էին, Սեբաստիա և Մելիտինէ և Նիքիերա Մեծ Հայքէ դուրս են, Ծոփք երբէք չատուկ մեծութիւն չունեցաւ, իսկ Մուսուլ Քաղղէացւոց աթոռ է և ոչ Հայոց:

Երկու կողմերուն դէմընդդէմ անհիմն պատմութիւնները թողլով և լոկ պատմական եղելութիւնները ամփոփելով կրտսմք, թէ Հայք ի սկզբանէ առաքելական և հայրապետական աթոռ եղան, երբէք կեսարիոյ կամ Պոնտոսի եքսարքութեան նահանգ չեղան, երբէք կեսարիոյ աթոռը Մեծ Հայոց վրայ եկեղեցական իրաւասութիւն չգործածեց, իսկ ձեռնադրութիւն առնելու խնդիրը ըլլորովին անծանօթ է արտաքին պատմիչներուն, իսկ ներքին պատմիչներէն միայն Ներսէսի և Գրիգորի համար իբր ստուրգ կրնանք ընդունել, իսկ Յուսիկի և Փառէնի երթալը չլոթ երկբայական է, և թէ վերջապէս պատահական կերպով եղած բան մը պատահական կերպով ալ զաղբեցաւ, առանց որ և է դիտողութեան կամ միջադէպի տեղի տալու:

Վերջէն ընտրուողներուն արդէն ձեռնադրուած եպիսկոպոս լինելը, հաւանականագոյն պատճառն է պատահական սովորութեան դաղբելուն:

3. ՄԱՀ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԷՊՔԵՐ

Շահակի անցեալին վրայ մինչև հիմալ անցողակի ըսածներէս դուրս բան չունինք լիջելու: Մանաղկերտացեաց ցեղէն, Մանաղկերտի եպիսկոպոս, 352ին, տեղապահ Փառէնի մահուանէ լետու, 360ին դարձեալ տեղակալ Արշակի հրամանով Ներսէսի քաշուելու տարիներուն, 372ին արեւելեան եպիսկոպոս

պստաց ուղերձին մէջ ստորագրող Յուսակ անունով, 373ին իրաց բնական բերմամբ կաթողիկոս եղաւ 70է վեր տարիքի մէջ. Լուսաւորչաց ցեղէն Սահակ կալր միայն հաղիւ 24 տարեկան երիտասարդ, ալ և նա բացակայ էր, միւս կողմանէ փափաք ալ կալր հանդարտ ձերունի մը ունենալ իբր կաթողիկոս:

Շահակին համար գրուածներն են. «ոչ հեռի ի գովութեան» (Խոր. 94), «Բրիտտոնեայ, բայց երկչոտ և հաւան» (Բուզ. 238), «Ալր գովելի առաքինութեամբ և բարեկարգութեամբ կրօնից» (Նշխ. 27. Յովհ. 67), որք կըցուցնեն թէ բարի և հանդարտաբարոյ ձերունի մըն էր, առանց կարողութեան, և թերևս առանց իսկ լսօտութեան քաղաքական գործոց միջամտելու և արքունեաց ղէմ մաքառելու: Ըստ Բուզանդայ տարօրինակ անկարգութեանց կը ձեռնարկէ Պապ, զորս կթէ լուսութեամբ հաստատած լինէր Շահակ, մեղադրանքէ ազատ պիտի չմնար, նաև իբրև լոկ եկեղեցու պաշտօնեայ նկատեալ:

Պապայ վերագրուած լանցանքներն են. որբանոցներ և հիւանդանոցներ կործանել, կուսաստաններ ցրուել և կոյսերը պղծել, աղքատաց վերակացուները հալածել և աղքատաց օգնողները պատժել, եկեղեցեաց պողիները խափանել, ամուսնութեան հաստատութիւնը բառնալ և ազատ կնաթողութիւնը ներել, հեթանոսական վայրագ սուղերը նորոգել, եկեղեցական պաշտօնեաները արքունեաց ստրկութեան առնուլ, եկեղեցական կալուածներուն եօթնէն հինգը զրաւել, և վերջապէս կուռք կանգնել և համարձակ դիւապաշտութեան սկսիլ: Իւրերին է ընդունել թէ Պապ անհոգութեամբ թող տուաւ որ Ներսէսի դրած բարեկարգութիւնք խափանուին, ալ Բուզանդայ գրածները եկեղեցու հալածչի և ուրացողի մը կերպարանը կը զգենուն. որ հաւանական չերևիր քրիստոնեայ իշխանի մը վրայ: Միւս կողմանէ նոյն իսկ Պապի 23 տարեկան հասակը լուրջ գործողութեանց ընդունակ չէ: Վերջապէս Ներսէսի մահէն մինչև Պապայ սպանութիւնը հաղիւ թէ տարի մը անցած է և Պապ պարտաւորուած է լունական ամբաստանութեան ղէմ ինքզինքը պաշտպանել, որով աւելի զղուշաւոր լինելու ալ հարկ զգացած պիտի ըլլայ:

Յունաց և Պապայ հակառակութիւնը որչափ և պատմիչներէն վկայեալ սակայն առեղծուածական լինելէ չդադրիր, Յոջն մօր դուակ, Յունաստան ապրած, լունական կրթութիւն առած և Յունաց օգնութեամբ թագաւոր եղած անձի մը վրայ:

Մերայինք կըսեն թէ Պարսից հետ դաշնակցեցաւ և Յունաց դէմ ելաւ (Բուզ. 238, Խոր. 94), իսկ լատին պատմիչը կըսէ թէ Տերենտ կուսակալ Պոնտոսի հալ նախարարներէն ոմանց հետ համամտութեամբ Պապը շարունակ կամբաստանէր Վաղէսի առջև, և Հայոց դժգոհ լինելը պատճառելով թաղաւորը փոխել կառաջարկէր, որպէս զի Հայեր լուսանատելով Պարսից կողմ չանցնին (Ամմ. 328), որ ըսել է թէ Պարսից կողմ անցած չէին տակաւին, և բոլոր գործը կամփոփուի Տերենտի անձնական հակառակութեան վրայ:

Վաղէսի հրամանաւ Պապ կուգալ կիլիկիոյ Տարսոն քաղաքը և նենգութեամբ կալանաւորուելէ կասկածելով, 300 ձիաւորով կը փախչի, հետամուտ եղող գունդը ետ կը դարձնէ. Սփրատը ի լող կանցնի, Դանիէլ և Բարդեմիր գնդապետներուն գրաւած կիրճերէն հնարիմացութեամբ կաղատի, և իւր թագաւորութեան երկիրը կը դառնալ: Յունաց զօրավար Տրալիանոս, ստացած հրահանգին համեմատ, նախ Պապին վստահութիւնը կը գրաւէ, և հացկերով ի հրաւիրելով սեղանի վրայ սակրաւորաց ձեռք սպանել կուտայ (Ամմ. 329—230, Բուզ. 238—239): Այս կը գործուի 374 տարուոյ ամառուան մէջ Բագրևանդայ Խոն գիւղը:

Խորենացու պատմութեամբ Պապ Յունաց դէմ պատերազմի կելնէ և զերի կիւնայ Տերենտի ձեռք և կապանօք թէոդոսի կը զրկուի և թէոդոսի հրամանով կը գլխատուի ի կոստանդնուպոլիս (Խոր. 96): Սակալն թէոդոս 379ին կալսրութեան հասած լինելով, բարեբաղդաբար Խորենացու անարգական պատմութիւնը ի հիմանց կը մերժուի, թէոդոսի անուանալ լաւիտենական արատ մը չլինելու համար:

Խորենացիէն ունիմք թէ Պապ 7 տարի թագաւորած է, որ է ըսել թէ թագաւորութեան 7րդ տարին սպանուած է: Արդ, 368ին թագաւորած լինելով 374ին կը լինի վախճանը, հազիւ 24 տարեկան եղած օտեն:

Անխորձ պատանի մը երեցաւ Պապ իւր բոլոր իշխանութեան մէջ, փորձանքներու և վտանգներու մէջ արի, ալլ անկարող երկրին օգտակար և ազգին սիրելի լինելու, որ լալանի է ազգային պատմիչներուն իւր վրայ նախատանօք խօսելէն: Ամփրանոս իբրև ժիր և լուսալից երիտասարդ մը կը ներկայացնէ Պապը, իսկ անունը շարունակ Պարա (Para) կը գրէ, որուն ստուգ լուծումը արուած չէ: Կալանոս պարզ սխալման:

կը վերագրէ և ինքն ուղղելով Պաբա (Paba) կը գրէ (Կալ. Ա. 52):

Պապայ սպանութենէ ետև Յոնք անմիջապէս՝ նոր թագաւոր մը տուին Հալոց, զի Տերենտի առաջարկն ալ պարզապէս Պապը փոխել էր և ոչ թագաւորութիւնը ջնջել: Նշանակուած անձը եղաւ Վարազդատ, թուն Արշակայ և եղբորորդի Պապայ (Բուզ. 248, Վարք 118), որ ի ժամանակի փախստենէն Շապուհ, (Խոր. 96),—ալլ լալտնի չէ թէ որ փախչելէն—ինքն ալ Կոստանդնուպոլիս գացած և կայսերական բանակին զինուորած, և ողոմպիական ըմբիշներու քաջութիւններով նշանաւոր եղած էր: Տարիքը պզտիկ և հաղիւ 25 կրնայ ենթադրուիլ: Վարազդատին գալէն առաջ նախարարք Մուշեղայ: նախազանութեամբ խորհուրդ քրած և Յունաց կողմը մնալու որոշում տուած էին (Բուզ. 243), ուստի Վարազդատն ալ զիւրութեամբ ընդունեցան:

Վարազդատ հաղիւ 374ին վերջերը կրնայ գործի զլուխ անցած ըլլալ: Այդ միջոցին Շապուհ նորէն Հալաստանը գրաւելու հետամուտ էր, և զոնէ կիսելու և ջնջելու համար դեսպանութիւն լղեց առ Վաղէս: Վաղէս մերժեց և նորէն փոխադարձ դեսպաններ զրկուեցան, ալլ համաձայնութիւն չգոյացաւ և 375ին մեծ պատերազմի պատրաստութիւնք սկսան երկուստեք: Երբ Վաղէս կուզէր քոլոր զօրութիւնը այս կողմ թափել (Ամմ. 331), և Մուշեղի խորհրդով Հալաստանի մէջ նոյն իսկ Հալերով Յունական բանակ կազմել (Բուզ. 241), պարտաւորուեցաւ արեւելքը լքանիլ և արևմուտքէն եկող վըտանդին դէմ վաղել: և Վիկտոր զօրավարին լանձնեց Պարսից հետ բանակցիլ և զիջողական պայմաններով խաղաղութիւնը գնել, և այսպէս ոչ կրցաւ Պարսից լաջողութիւնը արգելուլ և ոչ ալ իւր կորուստին վրէժը լուծել (Ամմ. 331):

Վարազդատ անփորձ երիտասարդ և հասակակիցներով շրջապատուած, տակաւին կրցաւ ալդ շիթութեանց մէջէն պատուով ելնել, ազդին սիրելի լինել և հնար եղածին չափ խաղաղ կառավարութեան սկսիլ Յունաց հաճութեամբ Պարսից հովանաւորութեան տակ մտնելով (Բուզ. 241): Մուշեղ էր ալդ գործերուն հոգին, ոչ նուազ քաջ զօրավար, քան ճարտար աշխարհավար:

Միայն կաթողիկոսի անուան չենք հանդիպիր այսպիսի նշանաւոր զիպուածոց մէջ, ինչպէս են Պապայ սպանութիւնը:

Վարազդատայ թագաւորելը և երկրին քաղաքական կերպարանափոխութիւնը: Տարիք և բնաւորութիւն են Շահակայ արդարացումը: Եկեղեցական դործունէութիւն ալ չունիմք որ նորա անունը կրէ, և հայրապետութեան չորրորդ տարին կեանքըն ալ կը կնքէ (Խոր 94): Այդ տեսողութեան չափը զոր նախկին պատմիչը կուտայ, փոփոխելու հարկ չեմ տեսներ. թէպէտ լեւորներէն ոմանք մինչև 2 տարի իջեցուցած են և ուրիշներ մինչև 6 անեցուցած, առանց ժամանակագրական ստիպողութեան: Շահակայ 4 տարիները պէտք է զետեղել 373 էն 377:

Ոչ մահուան պարագայք լալտնի են և ոչ գերեզմանին տեղը: Հաւանական է ենթադրել որ բոլորովին քաջուած կեանք մը ունէր, և եթէ մահն ալ իւր հայրենական Մանազկերտի մէջ չեղաւ, հարկաւ մարմինը փոխադրուեցաւ իւր հայրենական կալուածքը, ինչպէս բոլոր նախորդ հայրապետաց համար պատմուած տեսանք: Դիտողութեան արժանի է որ և ոչ միուն համար կրցանք գրել տակաւին թէ Մայր Աթոռին մէջ մեռաւ և Մայր Կաթողիկէին մօտ թաղուեցաւ:

Տ. ԶԱԼԷՆ ՄԱՆԱԶԿԵՐՏԱՑԻ

1. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ

Շահակայ լաջորդը դիւրաւ որոշուեցաւ ժառանգական ոճին հետեւելով և կաթողիկոս եղաւ: Զաւէն Մանազկերտացեաց կամ Աղբիանոսեանց տոհմէն: Յետիններէն ոմանք (Նշխ. 28, Յովհ. 68): Զաւէնը Շահակայ եղբայր կարծեցին, բայց լինէր միայն սպաղականութենէս կամ սի դաւակէ: Աղբիանոսի կըսեն (Խոր. 98, Բուզ. 271), հետեւաբար հաւանականագոյն է լոկ եղբորորդի կարծել:

Զաւէնի հայրապետութիւնը Խորենացին կը դնէ սերկրորդ ամի Վարազդատար (Խոր. 98), և մենք Վարազդատի թագաւորելը 374ին վերջը կամ 375ին սկիզբը դրած լինելով Շահակի մահը և Զաւէնի լաջորդութիւնը միանգամայն տեղի ունեցած կը լինին 377ին և Խորենացու ժամանակագրութեան համեմատական մասը անփոփոխ կը մնայ:

Խորենացին լուռ է բոլորովին Զաւէնի արդեանց կամ արժանեաց վրայ, ալ Ներսէսի վարքը գրողը և Յովհաննէս

կաթողիկոս ւառաքինահրաշ վարուք պայծառացեալ՝ կրօնն (Նշխ. 28, Յովհ. 68), թէպէտ ոչ գովեստի պատճառն է լաւտնի, և ոչ գովանի գործերու շարք մը պատմուած է: Այլ գոնէ համբաւոյն և աւանդութեան արձագանքը ունեցած են, ալք համարձակ վկայութիւնը տալու համար:

Իսկ Բուզանդ բոլորովին աննպաստ կերպով կը նկարագրէ Ջաւէնը, իբր սչարարար, խիստ, նախանձոտ անձ մը, որ սորկորոտութեամբ, ազանութեամբ, անառակութեամբ կալը դամննայն աւուրս կենաց իւրոց» (Բուզ. 271): Բայց արչապետ խուր նկարագիրէ ետև և ոչ մի դործ չպատմուիր, մինչ պատմիչը պարտաւոր է եղելութիւնները լալտնել, որ ընթերցողը իւր տպաւորութիւնները կազմէր: Դիտելի է ևս որ ալք խօսքերը կը գտնուին Բուզանդի վերջին կցկուր նիւթերուն մէջ, որք շատ մը քննադատութեան տեղի տուած են:

Ջաւէնի վրայ դրուած միակ մեղադրանքն այն է, որ ինքըն անձամբ և իւր քահանայք իրեն հետևողութեամբ կրօնաւորական զգեստի տեղ՝ ղինուորական զգեստ, այսինքն ազատ դասակարգի աշխարհականաց զգեստը սկսան հագնել, և խօսքը աւելի ճշդելով, զանց ըրին կրօնաւորաց լատուկ «պճղնաւոր» զգեստները որք մինչև ոտքերը կը հասնէին և սկսան հագնել «խոտորկուր ի վերայ ծնդաց», այսինքն է մինչև ծուկը հասնող և առջեկն շեղակի քացուած զգեստներ (ինչպէս Ապոստոսանայց հին քանդակներուն վրայ կը տեսնուին), այն ալ նարտաներով, ծոպերով և կոճակներով զարդարուած, և միանգամայն սամուրենի, կնքմենի, աղուէսենի և գալլենի մուշտակներ ալ գործածել, և այս զգեստներով բեմ ալ ելնել:

Արդ լալտնի է որ եկեղեցականութիւնը առաջ ալ երկու ծիւղ ունէր, մին կրօնաւորական կամ վանական անձերէ բաղկացած, և միւսը աշխարհիկ ամուսնացեալ երէցներէ կազմուած: Լուսաւորչալ ազգատոհմէն եղող հալրապետները կանուխ կամ անագան ինքզինքնին կրօնաւորութեան նուիրած էին և իրենց օրինակը ընդհանրացեր էր իրենց շրջանակին մէջ: Տարբեր էր Մանազկերտացեաց կամ Աղբիանոսեանց ուղղութիւնը, որք ամուսնաւոր դասակարգէ էին և աշխարհիկ ձևերը կը տանէին. այսպէս էր և Խազ, որ իբր ձևասէր և պրծնասէր կը բամբասուէր, այսինքն է իւր վարդապետին Ներսէսի կրօնաւորական ոգի մը չունէր, թէպէտ և սրբութեան և սքանչելագործութեան համբաւն ալ կը վայելէր միանգամայն:

Արդ խաչն ալ Մանազկերտացեաց աղգակիրց էր և անոնց պաշտպանութիւնը վարելեց իւր հալածմանց մէջ: Բուզանդ Ասպուրակէսի համար սրբութեան վկայութիւնը չզլանար, թէպէտե կըսէ թէ «աղանէր զամղարեալս և ժապաւինեալս» (Բուզ. 280): Զաւէնի ըրածը պարզապէս դրութեան մը խնդիր կերևի, ալսինքն կրօնաւոր և վանական չեղող եկեղեցականները, կրօնաւորական պճղնաւորին կամ սքեմին պարտաւոր չնկատել, և թերևս ալդ դրութեան պաշտպան կանգնելը ոմանց կողմանէ մեղադրանաց առիթ ընծայեց: Սակայն ինչ որ խաչի և Ասպուրակէսի վրայ մեղադրելի չընկատուիր, պէտք չէ որ Զաւէնի վրայ մեղադրուի: Միւս կողմանէ աշխարհական երէցներուն աշխարհիկ ձևով զգեստաւորուելուն օրինակը դեռ ևս կայ դաւաճներու մէջ, և կովկասի քահանաներ աշխարհականի զլխարկներ կը գործածեն, և Թուրքիոյ եկեղեցականներուն սովորական տարազը առաջին ատեններու պատուաւոր աշխարհականներու տարազն էր, և օրինակներն ալ դեռ ևս կը տեսնուին:

Վարազդատի ժամանակն էր Զաւէնի հարապետութիւնը, երբ փոքր ի շատէ խաղաղ և լաջող ալ էր երկրին կացութիւնը: Բայց զժրաղղաբար տնողական չեղաւ: Բատ կամ Սմբատ Սահառունի, Վարազդատայ սնուցիչը, սպարապետութիւնը ձեռք ձգելու համար դաւաճանութեամբ սպաննել տուաւ Մուշեղը, իբր Պասլայ սպանութեան գործակիրց ցուցնելով զայն: Բատ եղաւ սպարապետ, բայց նոյն միջոցին Մանուէլ և կոն՝ Մուշեղի եղբայրներ Պարսկաստանէ դարձան համախոհներ գտան, Վարազդատի դէմ ելան, և հրաւիրեցին, որ թագէն ու երկրէն հրաժարի և հեռանալ (Բուզ. 242—248):

Վարազդատ անարգեց և ինքն ալ զօրք ժողովեց: Կարնոյ դաշտի պատերազմը Մանուէլի լաջող եղաւ: Բատ դերի ընկաւ և սպանուեցաւ, Վարազդատ ալ դերի պիտի ինար Մանուէլի որդւոց ձեռք, եթէ հարերնին չարգելէր, որպէս զի փախչի և երթայ (Բուզ. 249): Վարազդատ Յունաց կայսերութեան կողմը դնաց իւր թագաւորութեան չորրորդ տարին (Խոր. 98), ալսինքն է 378-ին: Վաղէս հապճեպով Գոթաց դէմ կերթար, ուր և մեռաւ 379-ին: Հետևաբար Վաղէս Վարազդատի օգնելու վիճակի մէջ չէր: Թէոդոս որ նմին լաջորդեց, օգնել չուզեց և աքսորեց ալ (Խոր. 98), հարկաւ իւր անխոհմտութեամբ ձախողութիւնը վրան հրաւիրած լինելը զգալով:

Վարազդատի փախչելէն լետոյ, Մանուէլ Պապայ երկու պղտիկ դաւակները և անոնց մալրը մէջտեղ կը հանէ և անոնց անուամբ կը դործէ: Թագուհուն Զարմանդուխտ անունը (Բուզ. 251), հայ կարծեցնել կուտայ զինքն, բայց Խորենացի սի կայսերական քաղաքէն» էր կըսէ (Սոր. 102), գուցէ տղալոց լոյն մեծ մալրը իրենց մօրը հետ փոխանակելով: Ենթադրելով որ Պայ Թագաւորելէ առաջ ամուսնացած լինի, Արշակ և Վաղարշակ իւր որդիք կրնային այս միջոցին 12 և 11 տարեկան պատանեակներ լինել:

Արտաքին ուժ ալ գտնելու համար, պահ մը կայսեր զինու խորհուրդը ունենալէն ետքը (Բուզ. 251), կորոշեն Պարսից զիմել, և ծերունին Շապուհ Սուրէն մարզպանը կը ղրկէ Պարսից շահերը հողալու, և միանգամայն կը լղէ երկուց տղալոց արքունական «թագ», և Զարմանդուխտի «վառ թագաւորաց», և Մուշեղի «թագաւորական պատմուճան» (Բուզ. 252): Այսպէս Մանուէլի ջանիւք երկիրը անդորր կացութիւն մը կը ստանայ: Ըստ Բուզանդայ լանկարծ Մանուէլ Սուրէնը կը հալածէ, Պարսիկներու վրայ երեք մեծ լաղթութիւններ կը տանի և նորէն երկիրը եօթը տարի հանդարտ կը մնայ, և այս ամենուն զրգուիչն է Մեհրուժան ուրացեալը: Եօթը տարի չետոյ Մեհրուժան նորէն պատերազմի կուզայ և Մանուէլէ կը սպանուի (Բուզ. 252—263): Բայց այս ամենը ընաւ պատմութեան հետ կապ չունի և նախորդ Արշակի պատմութենէն փոխանցուած կերևի, մանաւանդ որ Մեհրուժանը Պապայ ժամանակէն սպանուած դիտեմք:

Ըստ ալլոց Թէոդոսն է Արշակն ու Վաղարշակը զուգ թագաւորեցնողը (Սոր. 100), ալ այս կրնայ Թէոդոսի կողմանէ պարզ հաւանութիւն լինել, քանի որ արեւելքի դործերով զբաղելու կամք ալ չունէր Թէոդոս: Նորէն կը լիշուի Արշակայ և Վաղարշակայ թագաւորելը (Բուզ. 264), բայց այս ալ երկուց եղբարց ամուսնական պսակադրութեան հետ, իբր չափահասներ՝ թագադրութեան և օժման արարողութիւնը ընդունելն է: Արշակի կինը եղաւ Մանուէլի Վարդանդուխտ աղջիկը (Բուզ. 262), թէպէտ ուրիշներ Բարզէն Սիւնիի աղջիկը կըսեն (Սոր. 100): Իսկ Վաղարշակ առաւ Սահակ Բագրատունիի աղջիկը: Այս եղելութեան թուականը եղած է 380 տարին:

2. ՄԱՀՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Բաւական կտրեոր զիպուածներ կատարուած են ալդ միջոցին, և Չաւէն հալրապետը եղած պիտի լինի մանուկ թագաւորները պսակողն և օժողը. սակայն պատմութիւնը երբէք հալրապետին անունը չիշեր: Ընդհանրապէս Մանազկերտացիք մեր պատմիչներուն համակրութիւնը չեն վախելած:

Չաւէնի պաշտօնավարութիւնը տեւած է չորս տարի (Խոր. 98), և ալդ տեղութիւնը պէտք է դնել 377-էն 381. Միւս կողմանէ 361 կրնայ Արշակայ երկրորդ տարին ալ ըսուիլ, յորում դրուած է Չաւէնի կաթողիկոսութեան վերջը (Խոր. 100):

Չաւէնի պաշտօնավարութեան տեղութիւնը Բուզանդ երեք տարի ըսած է (Բուզ. 272), որ կրնայ Գ. և Տ թուատառերու շիթութենէ ծագել. նոյնը կրնամք ըսել ուրիշ երեք տարի դնողներուն համար ալ (Յովհ. 68): Իսկ Օրբելեան միայն մէկ տարի կուտայ (Օրբ. Բ. 249), ինչպէս կընեն ևս նորերէն Չամչեան և իրեն հետեողներ ժամանակագրական հաշիւը ուղղելու համար: Սակայն մեր հաշուով Ներսէսի մահէն մինչև Սահակի ընտրութիւնը, 373-էն 387 միջոցը ճշդիւ կը պատասխանէ երեք Մանազկերտացիներուն 13 տարիներուն, և կամայական փոփոխութեանց պէտք չմնար:

Չաւէնի մահուան պարագայք, ինչպէս և իւր թաղման տեղը, պատմութեանց մէջ փշտակուած չեն, ալ սովորական հետեողութեամբ թաղուած կըլինի իւր հայրենական դամբարանը ի Մանազկերտ:

Բուզանդ Չաւէնէ ետքը կը դնէ Շահակ կործեայ անուն կաթողիկոս մը միայն երկու տարուան համար (Բուզ. 272): Բետաղայներէն Միխայել Ասորի՝ Շահակը Չաւէնի եղբայր ըրաւ և վեց տարի պաշտօնավարութիւն տուաւ (Միխ. լուել. 34), իսկ Խորենացի և բոլոր հին ու նոր պատմագիրք և ցուցակագիրք ալդպիսի անձ մը չեն ճանչնար. մեք ալ Բիւզանդի առանձնակ վկայութեամբ նոր անձ մը ցուցակի չեմք անցնել: Չաւէնի յաջորդութիւնը նախապատրաստեալ էր ժառանգական ոճով Պարթևագնեայց և Մանազկերտացեաց տուներուն մէջ, և Ասպուրակէս պատրաստ էր, և դուրսէ անձ մը կորճէից տոհմէն ներս մուծանելու ոչ հարկ կար և ոչ պատեհ առիթ:

Եթէ Բուզանդի գրածին ալ մեկնութիւն մը տալ ուզուի, ի դէպ է դիտել, որ Կորնելայք ուրիշ չորս գաւառներով Պարսից ձեռք անցած Յայնկոյս Տիգրիսեան նահանգը կը կաղմէին, և ալդ նահանգը կրնար իրեն լատուկ գլխաւոր պետ մը ունենալ, ալսինքն կպիսկոպոսապետ մը, որ շլոթմամբ կաթողիկոս և Մալր Աթոռոյ կաթողիկոս կարծուեցաւ: Հիմալ ալ Եգիպտոսի փոխարքայութիւնը Հայոց առաջնորդին պատրիարքի տիտղոս կուտալ: Այսպիսի ոք եղած պէտք է ըսել «Շահակ Կորնելայ գլուխ կպիսկոպոսաց» կոչուած անձը (Բուզ. 272), որուն վրայ ալդ անորոշ բացատրութենէն աւելի տեղեկութիւն չունիմք:

Տ. ԱՍՊՈՒՐԱԿԷՍ ՄԱՆԱԶԿԵՐՏՍՑԻ

1. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ

Զաւէնի անմիջական լաջորդն եղաւ Ասպուրակէս շի գաւակէ Ագրիանոսի» (Բուզ. 272), կամ «աղղական Շահակայ և Զաւենայ (Խոր. 100), կամ ըստ ոմանց նոյն իսկ շեղբայր նորուն» Զաւենայ (Վարք. 28, Յովն. 68), և կրնայ ալ ընդունուիլ ալդ վերջին պարագայն: Կաթողիկոսանալուն թուական պիտի ընդունեմք 381 տարին, որոյ Մալրսին գումարուեցաւ Կոստանդնուպոլսոյ Ս. Ժողովը լորում Մեծ Հայոց եպիսկոպոսներէն ոչ ոք ներկայ զտնուեցաւ: Ամեն պատմագիրք համաձայն են իբրև բարի և առաքինի և սրբակրօն անձ ճանաչել զԱսպուրակէս, նոյն ինքն Բուզանդ զովեստներ կը շուրջէ, թէպէտև կընդունի թէ զգետի մասին ըստ ամենայնի Զաւէնի կը հետևէր (Բուզ. 280):

Ասպուրակէսի կաթողիկոսութենէն քիչ ետքը կը մեռնի Մանուէլ խաղաղական մահուամբ. կարևոր նորութիւն մը Մամիկոնեան սպարապետներուն շարքին մէջ, զոր և ինքն ցաւելով կը զիտէ, թէ սղվաթար մահս մահճացս եհաս ինձ մեռանելը (Բուզ. 265): Մանուէլի մահուամբ նորէն երկպառակութիւնք սկսան և երկու դրացի պետութիւններուն թըշնամութիւնները գրգռուեցան: Բայց Թէոդոս Մեծ կայսրը և Շապուհ Գ. Պարսից թագաւորը՝ Երկայնակեաց Շապուհի թոռը՝ խաղաղութեան զաշինք հաստատեցին 384 տարին (Dreyss-Ա. 165), և ալդ անթիւ Հայաստանը մէջերնին բաժանեցին:

(Խոր. 102), միանգամ ընդ միշտ խնդիրի առիթը վերցնելու համար Յունաց բաժին եղան Բարձր Հալոց և Ծովաց նահանգներ ինչ ինչ լարակից մասերով մ.ւ.ս նահանգներէն. և Արշակ արն կողմը անցաւ անհաւատի ձեռքին սակ չմնալու համար (Փարսոյ. 33):

Գրեթէ տասուերեք նահանգներ Պարսից մնացին աշխարհին մեծագոյն և լաւագոյն մասը, բայց նախարարներէն շատեր Արշակի ետեէն սկսան դաղթել: Ասպուրակէս հալրապետ, որոյ հայրենիքն ալ աթոռն ալ Պարսից բաժնին մէջն էր մնաց իւր տեղը, և կենթադրեմք թէ գլխաւոր դեր ունեցաւ նոր Արշակունի թագաւոր մը զնկելու որոշման մէջ, որ նոյն Խոսրով, թոռն նախկին Արշակալ, բայց ոչ եղբայր վարադատաւ, և գոնէ 45 տարեկան մարդ մը սուրն 384 տարուին մէջ, սրովհետեւ լոյժ ծեր մեռած կըսուի 415-ին:

Շապուհ Գ. Խոսրովը թագաւորեցնելէն ետքը հրաւէր կարդաց գաղթող նախարարներուն, և ոչ միայն ասոնցմէ շատեր ետ դարձան, այլ և միւս կողմէն գաղթողներ ալ եղան Հունիի (այժմ Կամախ) զանձերն ալ ի միասին բերելով: Աստի երկու հալ և աղղակից թագաւորաց թշնամութիւնը, որ վերջացաւ Երեւել դաշտի ճակատամարտով և Խոսրովի լաղթութեամբ, որով աշխարհին բաժանումը մնալուն և հանդարտ ձև մը առաւ:

Ասպուրակէսի համար դրուած է թէ սառաջնորդեաց գրանն Խոսրովու» (Բուզ. 272), և ալդ կը սուրճնէ մեղ թէ իւր նախորդներուն պէս անտարբեր չմնաց աղղալին և քաղաքական գործոց ընթացքին վրայ, և թէ արքունեաց մէջ ստանձնեց արն դերը, զոր կը պահէին և կը վարէին Պարթևեան տոհմին կաթողիկոսները:

Ասպուրակէսի հալրապետութիւնն ալ կարի համառօտ եղաւ, միայն հինգ տարի (Խորենացի 100), որով կերևի թէ սա ալ նախորդ Մանաղկերտացեաց նման ծերութեան ատեն կաթողիկոս նստաւ: Ասպուրակէսի կաթողիկոսութեան տարիները ոմանք եօթնի կը բարձրացնեն, թերևս Ե և Է թուատառերու շփոթմամբ. ուրիշներ երեքի կիջեցնեն իրենց ժամանակագրութեան հնազանդեցնելու համար, մեք դժուարութիւն չեմք զգար սկզբնականը պահելու: Մահուան թուականը կը լինի 386. պարագայք չեն դրուած, իսկ գերեզմանին տեղ դարձեալ հայրենական Մանաղկերտը ոչէտք է ենթադրել:

2. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆՁԵՐ

Բուղանդի պատմութեան վերջը ինչ ինչ կցկտուր լիշատակներ կը դռնեմք Խոսրովի ժամանակ փալլուն սրբակրօն եպիսկոպոսաց և միայնակեաց վրայ, որք ի միասին առեալ կարող են Ներսիսեան աշակերտութիւն և բարեկարգիչներու խումբ մը համարուել, իբրև նախընթաց Սահակեան աշակերտութեան և թարգմանիչներու խումբին: Արդարոց լիշատակը օրհնութեամբ տօնելու համար, անունները կը քաղեմք այստեղ:

Յիշատակեալ եպիսկոպոսներն են.

Ա. Փաւստոս եպիսկոպոս, ծագմամբ հռոմ, թելակալ կամ գործակալ Ներսէսի, տասուերկու խորհրդակից եպիսկոպոսներուն թիւէն. տեսուչ աղքատանոցաց մինչև Խոսրովի ժամանակ (Բուզ. 273):

Բ. Զորթ եպիսկոպոս, այլ ներքինի, ընկեր առաջնուն ի պատիւ և ի պաշտամունս (Բուզ. 273):

Գ. Արտիթ եպիսկոպոս Բասենոյ, Գանիէլի աշակերտութենէ մնացած, քարոզութեամբ շրջող մինչև ցխոր ծերութիւն (Բուզ. 274):

Դ. Երբակոս եպիսկոպոս Տալոց, լառաջն Շահապ կոչուած, հովուական աշխատութիւններով նշանաւոր (Բուզ. 278):

Ե. Զորթուզ եպիսկոպոս Վանանդալ, նոյնպէս նշանաւոր (Բուզ. 278):

Զ. Տիրիկ եպիսկոպոս ի դաւառէն Բասենոյ, նոյն կերպով նշանաւոր (Բուզ. 278):

Է. Մովսէս եպիսկոպոս ի դաւառէն Բասենոյ, նոյն կերպով նշանաւոր (Բուզ. 279):

Ը. Ահարոն եպիսկոպոս, այս ալ արդիւնաւոր (Բուզ. 279): Իսկ լիշատակեալ միայնակեացներն են.

Ա. Շաղիտա Ասորի, Գանիէլի աշակերտութենէն, ճգնող չԱռիւծ լեառն, որ Ներսէսի մահը տեսիլքով իմացաւ (Բուզ. 224—226):

Բ. Եպիփան լոյն, նոյն աշակերտութենէ և նոյն տեսիլքը տեսնող, ճգնող Մոփաց Մամբրէ լեռը, և լունաց կղզիներուն մէջ վախճանած (Բուզ. 226—228):

Գ. Առոստամ, կղբալր Փաւստոս եպիսկոպոսի, ծագմամբ

Հոռոմ, ճգնող Այրարատ գաւառի (Բուզ. 273):

Գ. Գինդ Սլիւռնի, տեսուչ արեղալից, վարդապետ անուն ստացած, ճգնող Ոսկեանց լեւան վրայ (Բուզ. 280):

Ե. Մուշէ, ձեռնասուն և լաջորդ Գինդի (Բուզ. 281):

Զ. Տրդատ կամ Տրդած, ճգնող Ի Տարոն, Ներսէսի մահուան ներկայ (Բուզ. 281):

Ի. Վաչակ:

Լ. Արտաշու:

Թ. Մարախ. երեքն ալ Գինդի նշանաւոր աշակերտներ:

Այս սրբակրօն անձանց կը խառնէ Բուզանդ սահրին անձնաւորութիւն մը, Յովաննէս եպիսկոպոս, Փառէն կաթողիկոսի որդին, որ մինչև ձերութեան տարիքը ընչից սիրուին արքունեաց մէջ ծաղրածուի պաշտօն կը վարէր: Կը պատմուի թէ չորս ոտքի վրայ և կառաչելով պաշտօնին մէջ կը պտտէր և թագաւորին մեղքը վերցնող ուշտ կը ձևանար, որպէս զի իւր վրան ագարակաց մուրհակներ դնեն: Սա ինքն անկնունք աւազակ մը լեւան վրայ քահանայ կը ձեռնադրէ, որպէս զի իբրև իրաւունք անոր զեղեցիկ ձին գրաւէ (Բուզ. 274—278): Ասանկներու լիշատակութիւն ալ կրնայ իբրև զգուշաւորութեան օրինակ ծառայել:

[Faint bleed-through text from the reverse side of the page, including references like (875) and (876)]